

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻ ԶԱՆԻ ՀԱՐՑԵՐ (մաս II)*

Շիրակի մարզի աշխատանքային ռեսուրսների օգտագործման վիճակը բարելավելու շարժառիթները թելադրում են խորապես մտորել տնտեսության զարգացման ուղղությունների ընտրության, այդ հարցում առկա սխալներն ու բացթողումները չկրկնելու և դրանց հետևանքները վերացնելու մասին: Հիմնվելով վիճակագրական տվյալների վրա՝ կիրառվում են բնութագրել XXդ. վերջին և XXIդ. սկզբին Շիրակի մարզի աշխատունակ բնակչությունն իր տնտեսական ակտիվության, գործունեության ու զբաղվածության հատկանիշներով:

1989թ. Շիրակի աշխատունակ բնակչության թվաքանակը (15-64 տարեկան) կազմել է 211859 մարդ, այդ թվում մարզի քաղաքային աշխատունակ բնակչության թիվն է 142689, իսկ գյուղական բնակավայրերում՝ 69172: 2001թ.՝ համապատասխանաբար՝ 181489 մարդ (114864-ը՝ քաղաքային, 66625-ը՝ գյուղական բնակավայրերում):¹ Ինչպես տեսնում ենք, նշված ժամանակահատվածում մարզի աշխատունակ տարիքի բնակչության թիվը պակասել է 30370 մարդով կամ 16,7%-ով, այդ թվում քաղաքային բնակավայրերում՝ 27825-ով կամ 24,2%-ով, իսկ գյուղերում՝ 2547-ով կամ 3,8%-ով: Այսինքն՝ Շիրակի մարզի քաղաքային աշխատունակ բնակչության նվազումը բազմաթիվ անգամ գերազանցել է գյուղական աշխատունակ բնակչության թվի նվազման ցուցանիշը: Կարծում ենք՝ դա բացատրվում է նրանով, որ 1990-ական թվականներին հանրապետությունում շուկայական հարաբերությունների անցման, պետական ունեցվածքի, այդ թվում գյուղատնտեսական հողահանդակների մասսայական սեփականաշնորհման պայմաններում գյուղերում աշխատունակ բնակչությունը որոշ առումով ապահովվեց աշխատանքով, իսկ քաղաքներում՝ ընդհակառակը, արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհումից հետո տասնյակ հազարավոր բանվորներ ու ծառայողներ դարձան գործազուրկներ: Դա են փաստում մաս վիճակագրական տվյալները: Այսպես, 2001թ. ՀՀ մարդահամարի տվյալներով Շիրակի մարզում գործազուրկների թիվը կազմել է 52646 մարդ, այդ թվում քաղաքայինը՝ 44456 մարդ կամ գործազուրկների ամբողջ թվի 84,4%-ը, որ ամենաբարձր ցուցանիշն է հանրապետությունում:² Այսինքն՝ ուսումնասիրվող ժամանակահատվածում Շիրակի մարզում էապես խախտվել է խորհրդային տարիներին ձևավորված արտադրահարաբերությունների և աշխատունակ բնակչության զբաղվածության համակարգը, իսկ Գյումրիում՝ հիմնավորապես:

Զբաղվածությունը մարդկանց աշխատատեղերով ապահովելու և հանրօգուտ աշխատանքային գործունեության մեջ մասնակցություն ունենալու համար նրանց միջև ստեղծված հարաբերությունների համակարգն է: Դա աշխատունակ բնակչության գործառնական բնութագրումն է: Վերլուծելով ուսումնասիրվող ժամանակահատվածում Շիրակի մարզի բնակչության զբաղվածության թվի շարժընթացը ստանում ենք հետևյալ պատկերը. Մինչև երկրաշարժը՝ 1988թ. առաջին կիսամյակին ներկայիս մարզի սահմաններում զբաղվածություն ունեցող մարդկանց թիվը կազմել է 139,3 հազար, այդ թվում Գյումրի քաղաքում՝ 75,2 հազար,³ իսկ 2001թ.՝ համապատասխանաբար՝ 79,4 և 29,8 հազար մարդ:⁴ Բերված թվերից երևում է, որ եթե 1988թ. համեմատ՝ 2001թ. Շիրակի մարզում զբաղվածություն ունեցող բնակչության թվաքանակը պակասել է 59,9 հազարով, ապա Գյումրիում՝ 45,4 հազար մարդով: Այսինքն՝ զբաղվածություն ունեցող բնակչության թվաքանակի նվազման 76%-ը բաժին է ընկնում Գյումրի քաղաքին: Ուսումնա-

* Սկիզբը՝ տես ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 8, Գյումրի, 2005, էջ 65-70:

¹ 1989թ. Համամիութենական մարդահամարի արդյունքները Հայկական ԽՍՀ-ում, Եր., 1991: 2001թ. ՀՀ մարդահամարի արդյունքները (Շիրակի մարզ), Եր., էջ 129-130:

² Նույն տեղում, էջ 165:

³ ՀՀ ԱՎԾ Շիրակի մարզային վարչություն, գ. 7, թ 42:

⁴ 2001թ. ՀՀ մարդահամարի արդյունքները (Շիրակի մարզ), Եր., էջ 168:

սիրվող ժամանակահատվածում մարզի տնտեսության ոլորտներում զբաղվածությունն ունեցող բնակչության թվի շարժմնաթիվը աղյուսակային պատկերը կլինի այսպիսին:

Զբաղվածության թվի շարժմնաթիվը Շիրակի մարզում 1988-2001թթ.*

Աղ. 1

	1988թ.			2001թ.		
	Շիրակի մարզ	ք. Գյումրի	Ընդամենը	Շիրակի մարզ	ք. Գյումրի	Ընդամենը
Զբաղվածների թիվը	64125	75230	139355	50182	29289	79471
Արդյունաբերություն	12354	37877	50231	1439	2059	3498
Գյուղատնտեսություն	29265	757	30022	27791	445	28236
Շինարարություն	1125	4353	5478	704	1656	2360
Առևտուր և հասարակական սնունդ	1345	5867	7212	413	2499	2912
Տրանսպորտ և կապ	2224	7038	9262	422	1675	2097
Առողջապահություն և սոցիալ. ոլորտ	1036	3425	4461	908	2326	3234
Կրթություն	2534	8864	11398	3005	5881	8886
Պետական կառավարում	2090	497	2587	4996	3128	8124
Կոմունալ տնտեսություն	547	1630	2177	237	1024	1261
Տնտեսական գործունեություն չնշածներ	-	-	-	10232	8384	18616
Տնտեսության այլ ոլորտներ	11605	4922	16527	35	212	247

Աղյուսակից երևում է, որ 1988թ. մարզի նյութական ոլորտում աշխատողների թիվը 94993 մարդ է, որը կազմել է ամբողջ տնտեսությունում զբաղվածների թվի 68,1%-ը, իսկ Գյումրի քաղաքում համապատասխանաբար՝ 50025 մարդ է կամ 66,4%: 2001թ. նյութական ոլորտում աշխատողների թիվը նվազել է 2,6 անգամ՝ հասնելով 36191 մարդու և կազմել է ամբողջ տնտեսությունում զբաղվածների թվի 45,5%-ը, իսկ Գյումրի քաղաքում՝ նվազել է 8,6 անգամ՝ հասնելով 5835 մարդու և կազմել է ամբողջ տնտեսությունում զբաղվածների թվի 19,9%-ը: Ուսումնասիրվող ժամանակահատվածում մարզի նյութական արտադրության ոլորտում աշխատողների թվի նվազման 75,2%-ը բաժին է ընկնում Գյումրի քաղաքին, հատկապես արդյունաբերության ոլորտին: Այլ է վիճակը ոչ նյութական արտադրության կամ սպասարկման ոլորտում: 1988թ. սպասարկման ոլորտում աշխատողների թիվը Շիրակում 20623 մարդ էր, իսկ Գյումրի քաղաքում՝ 14416, որ կազմում էր մարզի սպասարկման ոլորտի աշխատողների թվի 69,9%-ը, իսկ 2001թ. համապատասխանաբար՝ 21505 մարդ, Գյումրիում՝ 12559 կամ մարզի սպասարկման ոլորտում աշխատողների ամբողջ թվի 58,4 %-ը: Այսինքն՝ այդ տարիներին Շիրակի մարզի (առանց Գյումրի քաղաքի) սպասարկման ոլորտում աշխատողների թիվն ավելացել է 882 մարդով կամ 4,3%-ով, մինչդեռ Գյումրիում նվազել է 1857 մարդով կամ 14,7%-ով: Սպասարկման ոլորտում աճ է գրանցվել պետական կառավարման համակարգում: Դա պիտի բացատրել նրանով, որ 1988թ. պետական կառավարման համակարգն ընդգրկել է միայն վարչական կառավարման մարմինները, իսկ 2001թ. վարչական մարմիններից բացի, նրանում են հաշվվում նաև քաղաքացիական ծառայողները և բյուջետային հաստատությունների վարչական աշխատողները: Աղյուսակից երևում է նաև, որ 2001թ. մեծ է տնտեսական գործունեությունը չնշածների թիվը: Կարծում ենք՝ դրանում իր բացասական դերն ունի նաև տնտեսության նկատելի ստվերայնությունը. մարդահամարին հարցվածների մի մասը չի ցանկացել տեղեկություններ հարդել իր տնտեսական գործունեության վերաբերյալ:

Արդեն նշեցինք, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում մարզի զբաղվածություն ունեցողների թվի կտրուկ նվազումն դիտվել է նյութական արտադրության ոլորտում: Հետևաբար խոսքն առաջին հերթին կարևորվում է Շիրակի արդյունաբերության

* Աղյուսակը կազմվել է. ըստ ՀՀ ԱՎԾ-ի Շիրակի մարզային վարչության տվյալների, գիրք 7, թ. 42-45: Տե՛ս նաև 2001թ. ՀՀ մարդահամարի արդյունքները (Շիրակի մարզ), Եր., էջ 165-181

ճյուղերի նորովի զարգացման, նրա ուղղությունների ճիշտ ընտրության, ինչպես նաև տնտեսության մեջ զբաղվածության նոր կառուցվածքի ձևավորման առումով, որն իր վրա այսօր կրում է առևտրի և ծառայությունների մատուցման աճող դերի ազդեցությունը: ԽՄՀՄ-ի փլուզումից հետո քննություն չբնեց Շիրակի մարզում, հատկապես Գյումրիում առկա թեթև արդյունաբերական և մեքենաշինական խոշոր ձեռնարկությունների արտադրողական ուժերի տեղաբաշխման անհիմն քաղաքականությունը:

Խորհրդային տարիներին Շիրակը հանրապետության արդյունաբերության զարգացման խոշոր շրջաններից մեկն էր, և 1980-ական թվականներին արդյունաբերական արտադրության ծավալով հանրապետությունում զիջում էր միայն մայրաքաղաքին: Եթե Շիրակի մարզի արդյունաբերական ձեռնարկությունների կողմից թողարկված ապրանքային արտադրանքի ծավալը 1985թ. կազմել է հանրապետությունում թողարկված արտադրանքի ընդհանուր ծավալի 13.4%, ապա 1997թ.՝ միայն 3.2 %, 2003թ.՝ 2.7%: Գյումրիում այդ ցուցանիշները համապատասխանաբար 12.0%, 2.6% և 1.6% են:⁵

Ասել է թե՛ 18 տարիների ընթացքում Շիրակի մարզի արդյունաբերական արտադրանքի ծավալը հարաբերական թվերով հանրապետությունում պակասել է 4.9, իսկ Գյումրիում՝ 7.5 անգամ: Այդ տարիներին Շիրակի մարզի և Գյումրի քաղաքի արդյունաբերական արտադրության ծավալի անկումն ուղեկցվել է նաև այդ ոլորտում աշխատողների թվաքանակի նվազմամբ: Այսպես, 1988թ. Շիրակի մարզի արդյունաբերական ձեռնարկություններում աշխատել են շուրջ 50.2 հազար մարդ, 1997թ.՝ 14.0 հազար, 2001թ.՝ 3.5 հազար և 2003թ.՝ 3.3 հազար մարդ, իսկ Գյումրիում համապատասխանաբար՝ 37.8, 10.5, 2.1, և 2,0 հազար մարդ²: Այսինքն՝ 1988թ. համեմատ՝ 2003թ. մարզի արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների թվաքանակը պակասել է 15, իսկ Գյումրի քաղաքում 19 անգամ: Այդ թվի կտրուկ նվազումը պայմանավորված է եղել ոչ այնքան աղետալի երկրաշարժի պատճառած վնասներով ու մարդկային կորուստներով, որքան 1990-ական թվականների անցկացված սոցիալ-տնտեսական արևատական փոփոխություններով և, մասնավորապես, նաև ԽՄՀՄ-ի լուծարումով: Մեր սասածը հիմնավորենք թվերով. երկրաշարժից երկու տարի անց՝ 1990թ. Գյումրու արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների թիվը 22 հազար մարդ էր,⁶ 7 տարի անց՝ 1997թ. այդ ցուցանիշը նվազել է երկու, իսկ 2003թ.՝ 10 անգամ: Այդ տարիներին քաղաքից որակյալ աշխատուժային բնակչության արտագաղթն էլ հիմնականում խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների փակմամբ էր պայմանավորված: Այսպես, եթե 1990թ. քաղաքում քիչ թե շատ աշխատող արդյունաբերական ձեռնարկությունների թիվը 37 էր, ապա 2003թ.՝ 16, որտեղ աշխատել են ընդամենը 1069 մարդ, Արթիկ քաղաքի 5 ձեռնարկություններում՝ 96, Մարալիկ քաղաքի 2 ձեռնարկություններում՝ 68 և Ախուրյան գյուղի 6 ձեռնարկություններում՝ 101:⁷ Այն, որ մարզի արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների թվաքանակի կտրուկ նվազումը բերելու էր արտադրության ծավալների նվազման, օրինաչափ էր: Եթե երկրաշարժի նախօրեին՝ 1988թ. Գյումրի քաղաքի արդյունաբերական ձեռնարկություններում 37.8 հազար աշխատատեղերի պայմաններում թողարկվել է 600 մլն. ռուբլու (նշված տարում այդ գումարը կազմել է մոտ 600 մլն. դոլար) համախառն արդարանք,⁸ ապա 1990թ. 22 հազար աշխատատեղերի պայմաններում՝ 230 մլն. ռուբլու, 1997թ. 10.5 հազար աշխատատեղերի պայմաններում՝ 6,8 մլրդ. դրամի (նշված տարում այն կազմել է 13,6մլն. դոլար), իսկ 2004թ. 20 հազար աշխատատեղերի պայմաններում՝ 12,7 մլրդ. դրամի (նշված տարվա համարժեքով 34,5, իսկ 1997թ. համարժեքով՝ 25,5 մլն. դոլար):

⁵ Մ. Մ ա ն ս յ յ ա ն, Ա. Գ ռ ի գ ո ռ յ ա ն, Ա. Պ ո տ ո ս յ ա ն, Շիրակի մարզ (բնությունը, բնակչությունը, տնտեսությունը), Եր., 2002, էջ 103: Տեղեկագիր Շիրակի մարզի սոցիալ տնտեսական դրությունը 1995-1997թթ., Եր., 1997, էջ 2: ՀՀ մարզերը թվերով, 1999-2003թթ., Եր., 2004, էջ 11:

⁶ ՀՀ ԱՎԾ Շիրակի մարզային վարչության տվյալներ, գիրք 8, ք. 35:

⁷ Գաշտային ազգագրական նյութեր, Գյումրի, 2005, տետր 15:

⁸ Մ. Մ ա ն ս յ յ ա ն, Ա. Գ ռ ի գ ո ռ յ ա ն, Ա. Պ ո տ ո ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 103: Տեղեկագիր Շիրակի մարզի սոցիալ տնտեսական դրությունը 1995-1997թթ., Եր., 1997, էջ 2: ՀՀ մարզերը թվերով, 1999-2003թթ., Եր., 2004, էջ 11: ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները (Շիրակի մարզ) Եր., 2003, էջ 167: ՀՀ ԱՎԾ Շիրակի մարզային վարչություն տեղեկագիր, Գյումրի, 2003, էջ 14:

Ի մի բերելով Շիրակի մարզի, այդ թվում Գյումրի քաղաքի աշխատունակ տարիքի և զբաղվածություն ունեցող բնակչության թվաքանակի շարժընթացը ու արդյունաբերության արտադրության թողարկման ծավալների ու աշխատողների թվաքանակի փոփոխությունները ուսումնասիրվող ժամանակահատվածում՝ գալիս ենք հետևյալ եզրահանգման. Վերջին 15 տարիների ընթացքում հանրապետության իշխանությունները գործնական քայլեր չեն կատարել մարզի արդյունաբերական համալիրի հզորությունը պահպանելու ուղղությամբ: Ավելին, 2003թ. սկսած՝ կառավարության որոշումներով արդյունաբերական մի շարք շենք-շինությունների քանդելը, եղած շինանյութերի շուկայականից ցածր գներով վաճառքը դեռևս շարունակվում է: Մինչ օրս տեղական, մարզային և հանրապետության իշխանությունների կողմից չի մշակվել Շիրակի մարզի արդյունաբերության զարգացման համալիր ծրագիր: Նույնիսկ առաջարկություններ չկան, թե արդյունաբերության զարգացման որ ճյուղերին պետք է նախապատվություն տալ: Էլ ավելի է մեծացել մարզի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրական ֆոնդերի ֆիզիկական մաշվածությունը, բացատրել արտադրված ապրանքի ինքնարժեքը: Եթե ասվածին ավելացնենք նաև այլ խոչընդոտող գործոններ՝ դեպի տարածաշրջանի խոշոր երկրներ՝ Ռուսաստան, Թուրքիա և Իրան երկաթուղային տրանսպորտային ուղիների անգործությունը, որակյալ արդյունաբերական կադրերի արտագաղթը գործազրկության պայմաններում նրանց մասնագիտական ունակությունների կորուստը և այլն, ապա պատկերն իրոք հուսադրող չէ: Այսպիսի պայմաններում Շիրակի արդյունաբերության զարգացմանը և ձեռնարկություններում աշխատատեղերի ավելացմանը նպաստող գործոններ կարող են դառնալ նաև հումքային ռեսուրսների և էժան աշխատուժի, տրանսպորտային, արտադրական և ենթակառուցվածքների, արդյունաբերական ձեռնարկությունների համար կադրեր պատրաստելու նպատակով համապատասխան ուսումնական հաստատությունների վերաբացումը: (շարունակելի)

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ В ШИРАКСКОГО РЕГИОНА (часть II)

___ Резюме ___

___ А. Бояджян ___

В конце XX-начале XXI в. в Ширакской области, в основном в городе Гюмри, зарегистрировано снижение как численности трудоспособного населения, так и объема промышленного валового продукта. Так, в 1985г. от общего объема промышленной продукции Советской Армении на долю Ширакской области приходилось 13.4%, в 1997г. только 3.2%, в 2003г. 2.7%. В городе Гюмри те же показатели составили соответственно 12.0, 2.6, 1.6%. В 1988г. на промышленных предприятиях Ширакской области работали около 50.2 тыс. человек, в 1997г.- 14 тыс., в 2003г.-3.3 тыс., в Гюмри соответственно 37.8, 10.5, 2.0 тыс. человек. Снижение численности работников в промышленных предприятиях, а также промышленной продукции обусловлено отсутствием четкой и целостной программы экономического развития региона.